<<ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների արժեքային համակարգի զարգացումը գրականության դասերին

ԱՌԱՐԿԱ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Արմինե Հովհաննիսյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Բովանդակություն

1.Ներածություն_____3
2.Գլուխ 1.
Սովորողների արժեքային համակարգի զարգացումը գրականության դասերին
1.1 Արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում_____4
1.2 Հայրենասիրությունը՝ մեծագույն արժեք_____9
3.Գլուխ 2.
2.1 Արժեհամակարգի դրսևորումը <<Սասունցի Դավիթ>>էպոսում,ուսուցումը 10-րդ
դասարանում_____11
Եզրակացություն_____15
Գրականության ցանկ_____16

Ներածություն

21-րդ դարը տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվական մեծ հոսքի զարգացման դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա սերունդը: Ազգի հիմքը կրթությունն է:Կրթությանը ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է:<<Արժեհամակարգ>> հասկացողությունը մանկավարժական գիտության մեջ ընբռնվում է բավական լայն շավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Այս գործում անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, մասնավորապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ պայմանավորված է նրանով , որ արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այս իրավիճակներում անփոխարինելի է դպրոցի դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում, որի շնորհիվ ապահովվում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

ՆՊԱՏԱԿԸ զինել աշակերտներին ազգային արժեքներով, դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն, անմնացորդ սիրո և հարգանքի խոր զգացում:

Նշված նպատակից բխում են հետևյալ **խնդիրները.**

- Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու , արժևորելու կարողություններ:
- Բացահայտել սովորողների արժեքային համակարգի զարգացման հիմնական ուղղությունները գրականության դասերին:
- Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

1.1Արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բաղադրիչ:Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի ու համաշխարահային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է : Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակաության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարնեն ու երազանքները:Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է որ անհրաժեշտ ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընջացը պայմանավորված է համախմբվածությամբ,գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարուստությունն ու բարոյահոգեբանական արժեքները:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային կրթական հասարակական սոցիալական և այլն:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները :

Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործունեությունը,ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտը ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի ևտեղեկատվական տեխնալոգիաների միջոցով:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմանական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք : Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են ածակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները ,մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն,որով ստեղծված համաշխարահային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հարակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական ,բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ,իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվի՝ որպես մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում:
Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նունիսկ երբ դրսևորվում է հակառակորդի մոտ կամ թշնամու մոտ:Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:
Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ,նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամաբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաներից են: Ընդ որում դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր,այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային ընդանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:<<Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք , որ ամենամեծ ուրախություն՝դժվարություններին հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու,տիրելու ու տիրապետելու երջանկությունը>>(1.էջ59):
Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով(անհատական, խմբային,էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:
Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց այլն:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման ու ինքնավերահսկման ընդունակություններ:<<Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ>>(1.էջ65):

Փորձենք հասկանալ թե ինչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը գրականության դասերին: Չէ որ գրականության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Գրականությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Գրականության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը , պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի և դերի մասին:Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- Կարևորի ազգային-պետական մտածողության գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի , որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները մասնագիտակն վարպետությունը և այլն:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:,.

1.2 Հայրենասիրությունը՝ մեծագույն արժեք

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ , կործանվում դրա պակասի պատճառով :
Հայրենապաշտական դաստիարակություն . ահա՛ մեր փրկության խարիսխը :

Գարեգին Նժդեհ

Սովորողի հայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ գտնվել և գտնվում է դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ դպրոցական ուսումնառության գործընթացը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտի մոտ հայրենիքի հանդեպ պատկերացումներ և սեր արմատավորելու, ազգային ինքնագիտակցություն ձևավորելու, հայրենիքի պաշտպան դաստիարակելու գործում: Հանրակրթության պետական կրթական չափորոշիչով պայմանավորված՝ հստակ պահանջներ են ներկայացված սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար, որի բաղկացուցիչ մասն են կազմում աշակերտների
ռազմահայրենասիրական դաստիարակության, ազգային հոգևոր արժեքների գնահատման սկզբունքները: Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ: Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր
պատմական հայրենիքի՝ Արցախի ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա պատերազմը:
<<Հայրենասիրությունը ծագում է լատիներեն <<պատրիոտ>> բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը>>(5 էջ348):
Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին մանկավարժական երկարատև տարիների իր գործունեության մասին խոսելիս նշել է. <<Երեխաների դպրոց հաճախելու հենց առաջին օրերից ես նրանց հետ միասին սկսում եմ ճանապարհորդություններ կատարել դեպի մեր հայրենիքի վեհության, պատվի, փառքի, անկախության համար կատարված սխրանքների աշխարհը>>:
Հետևելով մեծ մանկավարժի պատգամներին՝ կրտսեր դպրոցում աշակերտի
հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման դասարանական և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝ դրական օրինակով, հայրենիքի մասին զրույցներով, գրական ստեղծագործությունների վերլուծություններով, միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելով և այլն: Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր միջոցառումներ.
արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների

վկայություն-հիշողություններ. սովորողները ճանաչում են արցախյան պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին, էքսկուրսիաների, արշավների իրականացում. երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը, մասնակցություն ազգային տոներին. սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին, զրույց, դասախոսություն, բանավեճ. աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ, հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ, արցախյան թեմաներով կինոդիտում. փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին: Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների՝ հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

2.1Արժեհամակարգի դրսևորումը <<Սասունցի Դավիթ>> էպոսում, ուսուցումը 10-րդ դասարանում

«Սասունցի Դավիթ» կամ «Սասնա ծռեր» էպոսը հայտնաբերողը եղել է հայ բանագիտության մեծ երախտավորը՝ Գարեգին Սրվանձտյանցը [6, 32]: : Այս երևույթի հայտնագործումը խիստ բնորոշ է մտավոր մի գործչի համար, որի ողջ ստեղծագործությունը նպատակ ուներ ամեն հայի, հատկապես նոր բարձրացող սերնդի գիտակցության մեջ ամրապնդել ազգային ինքնագիտակցություն ու հայրենասիրություն: Իր սրբազան նպատակը նա շարադրել է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքույկի ծրագրողի խոսքի մեջ: «Գրոց ու բրոց» ուշագրավ խորագիրն ազդարարում է հեղինակի թարմաշունչ ու նոր դիմումի արտասովոր բնույթը: Իր հիանալի գրքույկը Գ. Սրվանձտյանցը համարում է յուրօրինակ նվեր ողջ հայ ժողովրդին. նրանում հավաքված նյութերը ներկայացնում են հայի ոգին, հողը, ջուրը, այն ամենը, ինչը հային պահում է հայ: Չէ՞ որ դարեր ի վեր բռնակալները հազար ու մի խորամանկությամբ փորձել են արմատախիլ անել հայ ազգին, ջնջել նրան աշխարհի երեսից. «Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատվի հայուն և յուր երկրին, որ այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն, արյուն, գերություն կրած լինի, ու նորեն ցայսօր ապրի» : Որքա՜ն մարգարեական են հնչում իսկական հայրենասերի տագնապները: Նա զգում էր ցեղասպանության՝ դամոկլյան սրի կախված լինելը հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գլխին և իր անմնացորդ բանահավաքչական ու բանագիտական եռանդով փրկում էր բանահյուսական գանձերը՝ ի պահ տալով ապագա սերունդներին: Եվ դրանց մեջ էր հայ բանահյուսության մեծագույն գանձը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը:

«Մեր էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև» (Հ.Թումանյան): Էպոսի գաղափարական բովանդակությունն ուսումնասիրելիս խնդիր եմ դնում աշակերտների մեջ դաստիարակել այն ներկայացնող հիմնական տարրերը՝ **ազնվություն, հայրենասիրություն**, բարձր բարոյականություն: Աշխատում եմ զարգացնել նրանց ազգային մտածողությունը, պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը: «Սասնա ծռեր»-ը մի ամբողջ համակարգ է, որը կրթում, դաստիարակում է մի ամբողջ ժողովրդի: Քանի որ էպոսի ուսուցումը նախատեսված է 10-րդ դասարանում, և քանի որ պատանիներն ավելի շատ են հակված ինքնուրույնության, ուստի աշխատում եմ պատրաստի մեկնաբանություններ և գաղափարներ չտալ, այլ իրենց՝ աշակերտների միջոցով բացահայտել էպոսի գաղափարական բովանդակությունը: Գիտենք, որ մեր ազգի՝ իբրև տեսակի գոյության հիմքը **հայրենասիրությունն**

է, որը լավագույնս դրսևորվում է էպոսում: Հայրենասիրությունն էպոսի կերպարների համար առիթից առիթ ի հայտ եկող երևույթ չէ: Դա նրանց առօրյա կեցության ձևն է և դրսևորվում է նրանց բոլոր արարքներում՝ օտար զավթիչների դեմ մղած կռվում,
երկրի շենացմամբ զբաղվելիս, հասարակական անարդարությունների դեմ պայքարում, հանուն ընտանեկան ավանդույթների պահպանման գործունեության ժամանակ, նույնիսկ բարկության և կամ քնարական տրամադրության պահերին: Բոլոր դեպքերում նրանք չեն կորցնում իրենց մարդկային կերպարը. արդարամիտ են, վեհանձն, մանկական մաքուր պարզությամբ, բռնության դեմ՝ անողոք: Սասնա դյուցազունների չորս սերունդներն էլ բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ, նվաճողների և բռնակալների նկատմամբ հետևողական վճռականությամբ մղած պայքարով: Հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ սեփական գոյության իրավունքը հաստատելու համար մղած պայքարն են ներկայացնում նրանք՝ պահպանելով մեր ազգային արժեքները, որոնք ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը նույնն է մնում:
Էպոսի գաղափարական գծերից է ազատասիրությունը: Այնտեղ ազատությունը ներկայացվում է որպես բնական իրավունք ամեն մի մարդու համար: Հերոսները, պաշտպանելով իրենց ազատությունը, ուրիշներին չեն զրկում այդ իրավունքից: Սասունում բոլորը հավասար են և ազատ: Իրենց համար հատուկ կարգավիճակ մարդկային որևէ խմբում (ընտանիք, ազգակիցներ, համերկրացիներ և այլն) չեն էլ գիտակցում, ուր մնաց՝ պահանջեին: Նրանք ազատ էին ու վեր մարդկանց ստեղծած արհեստական օրենքներից: Աշակերտներին առաջարկում եմ կարծիքներ փոխանակել ազատության մասին այսօրվա պատկերացումների շուրջ: Գաղափարական բովանդակության գծերից է պետականության նկատմամբ ունեցած վերաբերմունքը, որը մեր էպոսում կարևորվել է և դրսևորվել տարբեր հերոսների արարքներում և խոսքերում: Օրինակ՝ Ծովինարը Խալիֆին հարցնում է, թե նրանց երկրում կարգ, օրենք չկա՞, որ հղի կնոջն ուզում են սպանել: Ձենով Օհանը Դավիթին ասում է. «Եթե մենք մեր դրած օրենքը չպահենք….»: Կամ, ասենք, Քեռի Թորոսի օրինակը. Սասնա բոլոր հերոսները մեռան, Քեռի Թորոսը չմեռավ, իսկ երբ Փոքր Մհերը մնաց անժառանգ և անմահ (հայրական անեծքը գործեց), Քեռի Թորոսը «կսկծու» մեռավ (որովհետև պետականությունն էլ չէր շարունակվելու): Աշակերտները բերում են այլ օրինակներ ևս: Սակայն շեշտվում է և այն, որ մեր ժողովրդի իդեալները մարմնավորող դյուցազունները անտարբերությամբ և արհամարհանքով են վերաբերվում իշխանական դիրքին և թագավորական գահերին: Նրանցից յուրաքանչյուրը կանգնում է թագավոր դառնալու հնարավորության առաջ, նույնիսկ բոլորին առաջարկվում է այդ, սակայն բոլորն էլ մերժում են նման հնարավորությունը: Նրանք պայքարում են ժողովրդի շահի համար, իրենց համարում են նրա մի մասնիկը. Բա մենք Սասնա տնեն չե՞նք, Չէ՛, մենք Սասնա տնեն ենք…[6, 42]: Նրանք անմնացորդ սիրով ու հոգատարությամբ են կապված ժողովրդին: Ժողովրդասիրությունը էպոսի ոչ միայն տղամարդ, այլև կին հերոսներին բնորոշ հատկանիշ է: Էպոսն սկսվում է Ծովինարի անձնազոհ արարքով: Հայրենասեր և ժողովրդասեր հերոսուհին կատարում է իր ընտրությունը. Ես մեկ ջան եմ, երթամ, կորսըվիմ, Քանց մեր Հայաստան երկիր ավերի, Էն հազար-հազար հոգիք կորուսանին [6, 42]: Հայրենիքի նկատմամբ պատասխանատվության զգացումն է մղում Դեղձուն Ծամին՝ հագնելու ամուսնու զենքն ու զրահը և պաշտպանելու Սասունը: Արմաղանը

երդմնազանց է լինում, իր մահվան գնով Սասնա տանը ժառանգ է թողնում: Նույն նպատակով, բայց ոչ թե սիրո թելադրանքով,
այլ սեփական երկրի շահի համար Իսմիլ Խաթունը նենգությամբ Մեծ Միհերից ժառանգ է ունենում:Նույն այդ շահի թելադրանքով, երբ Դավիթը սպանում է Մելիքին, հարազատ որդու դիակի առաջ Իսմիլ Խաթունը առաջարկում է նրան տեր կանգնել Մելիքի կնոջն ու երկրին: Մեր ժողովուրդը միջնադարում անգամ լուսավոր հայացք է ունեցել կնոջ նկատմամբ՝ նրան վերապահելով ոչ միայն տղամարդուն հավասար իրավունքներ, այլև պարտականություններ: Էպոսում հայ կանայք համարձակ են, ինքնուրույն: Խանդութն ու Գոհարը մենամարտում են իրենց փեսացուների հետ նրանց ուժը ստուգելու համար: Սիրուց Դավիթի հետևից ոտաբոբիկ վազող Խանդութը մի ավելորդ համբույրից վիրավորվում, հարվածում է սիրած տղամարդուն և ասում. – Դու քո հոր կտրիճն ես, ես՝ իմ: **Արժանապատվության** բարձր զգացողությամբ են օժտված մեր էպոսի դրական կերպարները: Միայն ազնիվ մարդիկ կարող են արժանապատիվ վարք դրսևորել: Էպոսի գաղափարական գծերից է **ազնվությունը:** Ազնվությունը նպատակին հասնելու ուղիղ ճանապարհն է մեր հերոսների համար: Նրանք ազնիվ ու անկեղծ են և՛ իրենք իրենց, և՛ այլ մարդկանց հետ հարաբերություններում: Ազնվությունից է ծնունդ առնում նրանց մարդասիրությունը: Էպոսում բազմաթիվ են օրինակները, որոնք գտնում են և ներկայացնում աշակերտները: Մեր ազնիվ հերոսը՝ Դավիթը, քնած Մելիքի վրա զենք չի բարձրացնում, արթնացնում է, որ կռվեն: Համեմատում ենք ադրբեջանցի Սաֆարովի՝ կացնով քնած մարդուն սպանելու զազրելի արարքի հետ, հետևություններ անում: Ազնիվ աշխատանքով են ապրում մեր էպոսի հերոսները: Սասունում չկար մարդու շահագործում մարդու կողմից: Երբ աշխատավոր մարդիկ լսում են, որ Սասունում հարկ ու տուրք չեն վերցնում, բոլոր կողմերից գնում են այնտեղ: Սասնա դյուցազունները վերացնում են հարկերը, ոչնչացնում կողոպտիչներին, իսկ կողոպուտը վերադարձնում ժողովրդին: Նրանցից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում նույնիսկ պարտված թշնամու ունեցվածքին ձեռք տալ: Դավիթը Մելիքին սպանելուց հետո նրա զորքին ազատ է արձակում, ինքը վերադառնում է Սասուն՝ մի սայլի վրա դրած տանելով միայն Մելիքի ականջը՝ որպես նրա ոչնչացման ապացույց, ոչ թե ռազմավար: «Ա՜խ, երանի՝ ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ…» թումանյանական երազանքը էպոսում մեր ժողովուրդը մարմնավորել է Սասնա դյուցազուններից հատկապես Դավիթի կերպարում: Իր ազնվությամբ, անմեղությամբ, մանկական մաքուր պարզությամբ, արդարամտությամբ ու վեհանձնությամբ է բնութագրվում նա: Մեր դյուցազունները բնութագրվում են և փոխադարձ **հարգանքով** ու **հանդուրժողականությամբ,** սիրելիների նկատմամբ ջերմ հոգածությամբ ու անմնացորդ սիրով: **Խաղաղասիրությունը,** խաղաղ կյանքով ապրելու գաղափարն է մեր դյուցազուններին մղում պայքարելու ոչ միայն հայ ժողովրդի, այլև ընդհանրապես մյուս ժողովուրդների համար: Էպոսում զարգանում է այն գաղափարական գիծը, որ ժողովուրդներն իրար նկատմամբ թշնամանք չունեն, թշնամություն հրահրողները իշխողներն են: Էպոսում համամարդկային գաղափարներ են ներկայացվում. խաղաղության պայքարը պատերազմի դեմ, կառուցման պայքարը՝ ավերման դեմ, արդարության պայքարը՝ անարդարության դեմ: Գաղափարական բովանդակությունն ուսուցանելիս շեշտում եմ, որ մեր հայրենիքը մեր քրիստոնյա էությունն է,

աստվածատուր մեր ինքնության կերպը, մեր տեսակը, որ պիտի կրենք: Հայրենիքի ոչ միայն տարածքային-նյութական ընկալում պիտի ունենանք, այլև հոգևոր:

Մեր էպոսի հերոսները սերնդեսերունդ պայքարում են նախ դև-չարերի, ապա՝ մարդ-չարերի, վերջում՝ իր իսկ մեջ եղած չարիքի՝ իր ծուռ էության դեմ: Պատահական չէ, որ էպոսի ստեղծման ժամանակ (8-10-րդ դդ.) ծնվեց մեր հզոր հանճարը՝ Նարեկացին (10-րդ. դ.), որի գործի հիմնական գաղափարը հենց դա էր՝ մարդու՝ իր իսկ մեջ, ինքն իրեն դեմ մղած պայքարով, ինքնամաքրմամբ, ապաշխարելով կատարելագործվել և իր աստվածաստեղծ նախկին վիճակին հասնել: Պատմական հարուստ փորձ և հասուն գիտակցություն ունեցող մեր ժողովուրդը դարեր շարունակ իր նվիրական խոհերն ու երազանքներն է ամրագրել մեր ազգային վեպի մեջ, և այն օգնել է մեզ մեր թշնամիների դեմ մղած պայքարում: Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝ մանկական մաքուր պարզություն (անաղարտություն), արժանապատվություն, արդարամտություն, վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է, այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և չարի դեմ պայքարող: Պատահական չէ սեր արմատի կրկնությունը: Այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր պայման է: Հավատի և հույսի հետ՝ նաև սեր….

Մեր էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են այսօր և հետագայում էլ կուղղորդեն մեր ժողովրդին դեպի կատարելություն:

Հայրենիքը մարդկանց տվյալ հանրության հոգևոր աշխարհի կերպն է:

Գաղափարները, որոնք ներկայացվում են էպոսում, այն դարձնում են մեր ժողովրդի ինքնության վկայագրերից մեկը և մեր ժողովրդի՝ էությամբ քրիստոնյա լինելու ապացույցն են: Մեր էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են այսօր և հետագայում էլ կուղղորդեն մեր ժողովրդին դեպի կատարելություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին գրականության դասերին: Դպրոցում սովորողները տարբեր առարկաների ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Գրականության առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի:Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Գրականության ցանկ

1. Ա.Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան,2002թ.

2. Բաբանսկի Յու.Կ.,Պոբեդանոսցև Գ.Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում,Երևան,1987, 112էջ

3. Բաբանսկի Յու.,Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում

4. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ.

5. Յու.Ա.Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ Երևան 2005

6. Հակոբջանյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության բացահայտումը («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան, 1982 թ., թիվ 1):